ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությամբ պաշտպանության ու հասարակական կարգի և անվտանգության բնագավառների ծախսերի վերաբերյալ







* 2020թ. պաշտպանություն/ՀՆԱ ցուցանիշը հաշվարկվել է հաշվի առնելով <<ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին >> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունման արդյունքում անվանական ՀՆԱ-ի 6170.2 մլրդ դրամ ճշտված մակարդակը՝ բյուջեով հաստատված 7095.1 մլրդ դրամի փոխարեն:

2020 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 20.5 %-ը կամ 387.7 մլրդ դրամը տրամադրվել է պաշտպանությանը, որի կատարողականը 2020թ. հաստավածի նկատմամբ կազմել է 125.9 %: Ընդ որում, 2020 թվականի փաստացի ցուցանիշը 2019թ. փաստացի մակարդակը գերազանցում է 22.9 %-ով, իսկ 2018 թ. փաստացի ցուցանիշից ավել է 62.6%-ով:

2020 թվականին պաշտպանության բնագավառի փաստացի ծախսերը կազմել են՝

- ՀՆԱ-ի 6.3 %-ը , որը 1.3%-ային կետով գերազանցում է նախապես ծրագրված մակարդակը, 1.5%-ային կետով գերազանցում է 2019թ. փաստացի մակարդակը և 2.3 %-ային կետով ավել է քան 2018 թվականի փաստացին էր,
- պետական բյուջեի ընդամենը ծախսերի 20.4 %-ը , որը 3.8 %-ային կետով գերազանցում է նախապես ծրագրված մակարդակը, 1.0%-ային կետով գերազանցում է 2019թ. փաստացի մակարդակը և 3.9 %-ային կետով ավել է քան 2018 թվականի փաստացին էր:

Հասարակական կարգ և անվտանգություն բնագավառին 2020 թվականին տրամադրվել է 96.9 մլրդ դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսվածի 99.3 %-ը: Ընդ որում, այս բնագավառի փաստացի ծախսերը 2019 թվականի համապատասխան ցուցանիշին գերազանցում են 5.4%-ով, իսկ 2018թ. փաստացի մակարդակին գերազանցում են 23 %-ով:

Հասարակական կարգ և անվտանգություն/ՀՆԱ փաստացի ցուցանիշը 2020 թվականին կազմել է 1.6 %, այնքան որքան նախապես ծրագրվել էր և 0.2 %-ային կետով ավել քան 2019 թվականին էր:

2020 թվականի պետական բյուջեի ընդամենը փաստացի ծախսերում հասարակական կարգ և անվտանգություն բնագավառի ծախսերը կազմել են 5.1%-ը , որը 0.4 %-ային կետով պակաս է նախապես ծրագրված մակարդակից, 0.6%-ային կետով պակաս է 2019թ. փաստացի մակարդակից և 0.3 %-ային կետով պակաս է քան 2018 թվականի փաստացին էր: